

ՍԱՂՄՈՍ 13

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Տագնապի մեջ օգնության համար աղոթք <u>MT նախաբան</u> «Գլխավոր երաժշտին, Դավթի սաղմուսը»	Վստահություն ՏԻՐՈՋ փրկությանը	Անձնական թշնամիներից ազատության աղոթք (Ողբ)	Օգնության աղոթք	Վստահ գանգատ
13:1-2	13:1-2	13:1-2	13:1-2	13:1-3
13:3-4	13:3-4	13:3-4	13:3-4	13:4-5
13:5-6	13:5-6	13:5-6	13:5-6	13:6

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

<p>NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 13:1-2</p> <p>¹Ո՛վ ՏԵՐ, մինչև ե՛րբ ես ինձ մոռանալու, հավիտյա՞ն . Մինչև ե՛րբ ես Քո երեսը ինձնից ծածկելու: ²Մինչև ե՛րբ եմ հոգուս մեջ խռովվելու՝ Ամեն օր սրտիս մեջ տրտմություն ունենալով . Մինչև ե՛րբ է թշնամիս վրաս բարձրանալու:</p>

13:1-2 Ուշադրություն դարձրեք այս ներածական պարբերության կառուցվածքի չորս «մինչև ե՛րբ» (BDB 723 II, տես՝ Սաղմ. 6:3, 90:13) հարցերը:

1. Սաղմ. 13:1-ում երկու անգամ
2. Սաղմ. 13:2-ում երկու անգամ

Սրանք գրական կերպեր են, որոնք արտահայտում են սաղմոսերգուի հուսահատությունը այդ պահի իրավիճակներում: Նա գգում էր Աստծուց լքված:

1. Աստծուց մոռացված՝ Սաղմ. 13:1ա
2. Աստված իրեն ծածկել է՝ Սաղմ. 13:1բ
3. անձնական վիշտ՝ Սաղմ. 13:2ա,բ
4. նրա թշնամին բարձրացած է՝ Սաղմ. 13:2գ

Ուշադրություն դարձրե՛ք #1 և #2 Սաղմոս 10:11-ում միասին են երևան գալիս: Լքվածության զգացողության թեման գեղեցիկ կերպով արտահայտվում է Սաղմոս 42-ում: Լքվածության զգացումը միայն վիրավորված սաղմոսերգուի ընկալումն է: Իրականությունն այն է, որ ՅԱՀՎԵՆ մեզ հետ է, մեր համար և տեղին, ճիշտ ժամանակին գործելու է մեր օգտին:

13:1 «հավիտյան» Այս բառը (BDB 664) չափազանցություն հանդիսացող դարձվածք է, որն արտահայտում է սաղմոսերգուի զգացումները՝ Աստծո կողմից մշտապես լքված լինելու:

❖ **«երես»** Սա նույնպես անձնական ներկայության համար երբայերեն դարձվածք է (տես՝ Սաղմ. 11:7, 17:15, 27:4,8): Ինչ-որ պատճառով (այսինքն՝ անձնական մեղք, տես՝ Սաղմ. 13:3բ կամ հիվանդություն, 3բ) ՅԱՀՎԵՆ թվացյալ թողել էր:

13:2 «հոգի... սիրտ» Այս երկուսը համագոր են և արտահայտում են երբայերեն անձի անհատականությունը: «Հոգի» (*nephesh*) բառի համար տես Ծննդ. 35:18-ի առցանց գրառումը: «Սրտի» համար տես Հատուկ Թեմա. Սիրտ:

❖ **«ամեն օր»** Այս դարձվածքը նշանակում է «ամբողջ ժամանակ»: Սա չի նշանակում, որ տխրությունը տևում է միայն ցերեկվա ժամերին:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 13:3-4
³Նայի՛ր, ո՛վ իմ ՏԵՐ Աստված ու լսի՛ր ինձ,
Լուսավորի՛ր իմ աչքերը, որպեսզի մահվան քնով չքնեմ .
⁴Զլինի թե թշնամիս ասի. «Հաղթեցի նրան»:
Կամ թե ինձ նեղողներն ուրախանան,
Որ սասանվեցի:

13:3-4 Այս պարբերությունը աղոթք է Աստծուն, որ պատասխանի Սաղմ. 13:1-2-ում իր աղոթքի հարցերին:

Այստեղ առկա է երեք ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԻ շարք (այսինքն՝ աղոթքի խնդրանքներ):

1. նայի՛ր (բառացի՝ տես) – BDB 613, KB 661, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 80:14, Ողբ 1:11, 2:20, 5:1
2. պատասխանի՛ր – BDB 772, KB 851, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
3. լուսավորի՛ր (այսինքն՝ «փայլեցրու») – BDB 21, KB 24, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ. սա կարող է գործածվել հետևյալ իմաստով՝
 - ա. Աստված, պատասխանի՛ր իմ աղոթքին և հայտնության գիտության համեմատ (տես՝ Սաղմ. 6:7, 19:8)
 - բ. Աստված, փրկի՛ր ինձ մահից (տես՝ Սաղմ. 38:10)

Նաև ուշադրություն դարձրե՛ք, որ NASB ունի «զլինի թե» երեք անգամ (MT, BDB 814, երկու անգամ):

1. չլինի թե մահանամ
2. չլինի թե իմ թշնամիները ուրախանան

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 13:5-6

⁵Բայց ես Քո ողորմությանը հուսացի,

Իմ սիրտը Քո փրկությանը է ցնձալու:

⁶Երգելու եմ ՏԻՐՈՋԸ, քանի որ ինձ հետ գթառատ վարվեց:

13:5-6 Սա սաղմոսերգուի ՅԱՀՎԵԻ հանդեպ ունեցած հավատքի, վստահության, ապավինության դավանությունն է:

1. Ես վստահել եմ հուսացել եմ (BDB 105, KB 120, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ) Քո ողորմությանը (տես՝ Հատուկ Թեմա. Ողորմություն): Վստահությունը կենսական կարևորության առանձնահատկություն է ճշմարիտ հավատացյալի համար (տես՝ Սաղմ. 25:5, 42:5, 65:5, 78:22, 86:2): Տես ամբողջական գրառումը Սաղմ. 4:5-ում:
2. Ես ցնձալու եմ (BDB 162, KB 189, *Qal* ՀԱՅՑԱԿԱՆ) Քո փրկությանը (տես՝ Հատուկ Թեմա. Փրկություն (ՀԿ տերմին)), որը համատեքստում վերաբերում է առողջության վերականգնմանը:
3. Ես երգելու եմ (BDB 1010, KB 1479, *Qal* ԸՂՁԱԿԱՆ):

Եբրայական մտածողության մեջ մահը *Sheol* իջնելն է, որտեղ ոչ ոք Աստծուն չի փառաբանում (տես՝ Սաղմ. 6:5, 30:9, 88:10-12, 115:17, Եսայի 38:18): Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. Որտե՞ղ են մեռելները: Տես Սաղմոս 6:5 և 9:13-ի գրառումները:

Սաղմոսերգուն իր վստահությունը հիմնել է ՅԱՀՎԵԻ բնավորության և գործերի վրա (այսինքն՝ «ինձ հետ գթառատ վարվեց», BDB 168, KB 197, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ):

13:6 «ինձ հետ գթառատ վարվեց» Այս ԲԱՅԸ (BDB 168, KB 197, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ) Սաղմոսներում կիրառվում է մի քանի անգամ (տես՝ Սաղմ. 116:7, 119:17, 142:7): Այս ՎԱՂԱԿԱՏԱՐ ձևը ցույց է տալիս սաղմոսերգուի համոզվածությունը, որ ՅԱՀՎԵՆ ապագայում կգործի իր համար, և հետևաբար, արտահայտվում է այնպես, կարծես թե դա արդեն տեղի է ունեցել:

❖ **«ինձ հետ»** Հետաքրքիր է LXX թարգմանում է սա որպես Աստծո համար անուն՝ «Ամենաբարձրյալ» (տես՝ NJB): Այս նույն փոփոխությունը կարող է տեղի ունենալ նաև Սաղմ. 7:8-ում:

NJB չունի համար 6-ը: Այն հետևում է LXX-ի համարակալմանը: Այն նաև ունի ավելացրած պոետիկ մի տող LXX-ից: NJB թարգմանում է վերջին երեք տողերը որպես ՀԱՅՑԱԿԱՆ (այսինքն՝ ԱՆԿԱՏԱՐՆԵՐԸ գործածված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով. դրան առանձնահատուկ «թող որ. . .»):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Սաղմոս 13:1-2 նկարագրում է, թե ինչպես են հավատարիմ հետևորդները իրենց զգում ընկած աշխարհում: Բացատրե՛ք սա ձեր իսկ բառերով:
2. Արդյո՞ք մահ նշանակում է «քնել»:
3. Սահմանե՛ք և բացատրե՛ք «ողորմությունը»:
4. Ինչպե՞ս է «փրկություն» բառը փոխում իր իմաստը ՀԿ-ից ՆԿ: